Պարույր Սևակ

Մեր երջանկությունը

Մենք շապիկով չծնվեցինք: Եվ մեզ համար
Ուրիշ տեսք է երջանկությունը միշտ կրել:
Մեզ ծնել է, աշխարհ բերել համեստ մի մայր,
Բայց մեզ ինքը պատմությունն է որդեգրել:
Մի աղջիկ է կյանքում սիրել ու մեզ փնտրել,
Մի խե՜նթ աղջիկ՝ երազների հետքով տարված:
Բայց գիտեինք, որ ապագան է մեզ ընտրել,
Որ ինչպես մենք՝ նա էլ մեզ է սիրահարված:
Համե՜ստ մի տուն,- բայց գիտեինք, որ հայրաբար
Լայն աշխարհն է իր դռները մեր դեմ բանում:
Աշխատանքի, ծառայության տանող ճամփա,-
Բայց գիտեինք, որ գալիք է նա մեզ տանում:
Առօրեական մեր հոգսերում ու մեր գործում
Կար մի իմաստ, կար մի խորհուրդ անբռնելի,
Որ գինու պես ուշացումով է ներգործում
Եվ որ միայն մեզ համար է ըմբռնելի:
Մեր խոսքերում կար մի շշուկ, կար մի հնչյուն,
Ամեն ինչում մի երազ էր վեր խոյանում,
Որով անգամ թշնամուց ենք մենք ճանաչվում,
Բարեկամին առանց թարգման ներկայանում:
Անգամ մահը... Նա մեզ համար վախճան չէր, ո՛չ:

Նա մեզ համար գործի կես էր, շարունակում.
Այդպես երեկ մարմիններով իրենց առողջ
Գնդացրի երախն էին մերոնք փակում:
Իսկ կյա՜նքը մեր... Մենք շապիկով չծնվեցինք.
Երջանկության այլ չափանիշ է մեզ տրված...
Մեզ նա՛ միայն կհասկանա, ով գեղեցիկ,
Բայց հեռավոր մի կնոջ է սիրահարված...

01.VII.1951թ.
Մոսկվա